

մէջ ամբողջապէս կը հրատարակէ: Այս բնագիրն ունէր 25 փետր. 1709 թուականը: Հրատարակիչն յառաջ բերելով Հ. Չամչեանի վերոյիշեալ կտորը, կը վերջացընէ Մ. Էմինի մէկ հրատարակութեան մէջ ըսածն հաստատելով, թէ Հ. Չամչեան «անխղճաբար բռնաբարէ զգրուածս մերոց հեղինակաց՝ թիւրելով զիմաստս նոցին եւ զբառս եւ զբանս»:

Դարձեալ 1873ին Չ. Մսերեանց իր «Փարոս»-ին մէջ, նոյն տարի Բ. Թիւ, էջ 6—28, նմանապէս առանց տեղեկութիւն ունենալու նախորդ երկու հրատարակութեանց վրայ, կը հրատարակէ ամբողջ բնագիր մը (1711 Ապր. 16 թուականաւ) իր դիտողութիւններովը: Այս բնագիրը լաւագոյն է Պետրոսեանի ընդօրինակութիւնէն, որ քանի մը տեղ տողեր թողած է, ինչպէս առ հասարակ իր ամէն ընդօրինակութիւններն անվստահելի են (անձնական քննութեանցս համա., տ. նաեւ Ղազար Փարպեցի Թիֆլիս 1908, Յառաջաբան): Մսերեանցի հրատարակութիւնը նաեւ այնու կարեւոր է, որ բնագիրն ընդօրինակող Սիմէոն սարկաւազ հետեւեալ տեղեկութիւնները կը յաւելու.

Արժան է աստէն, սիրելի մտքնակ եղբարցս յոչ արհեսել շոյս ինչ, զի յորժամ գիրս այս աստեղացաւ յարբողան Աստուղիկոսէն մերտէ ի Հոսմ, յետամբ ուրուսն թոժաս եպիսկոպոսի. որոյ էլեալ անբաւօր, ոչ լեողին զաստղինն մտանել աս Պտղն, եւ ասլ ընծայել զնոսղին. այլ յորեւ իբրեւ աղաշոտ ոմն, ժամանակս յնքս յամեցոցանէին զանողան պարճասու արգելմանն արայօրելով, եւ զն ինչ զարմանտ այսպիսի արարողա-